ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կ-401-22.10.2018-ՊԻՄԻ-011/0 օրենքի և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	**ՀՀ Կառավարություն**	«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում	Առաջարկվում է համաներումը կիրառել 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող, մեղադրվող կամ հանցագործություն կատարած անձանց նկատմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծում հոկտեմբերի 1-ը նախատեսվել էր գործնականում հնարավոր հանցագործությունները	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) հոդված 1, մաս 1	կանխելու նպատակով: Ըստ այդմ՝ Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված ամսաթիվը ևս փոփոխել:		
2	**ՀՀ Կառավարություն**	Նախագծի հոդված 2	Առաջարկվում է համաներում հայտարարելու արդյունքում պատժից ազատել առավելագույնը ոչ թե երեք, այլ չորս տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձանց: Ըստ այդմ՝ առաջարկվում է փոփոխություն կատարել նաև Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում: Առաջարկը հիմնավորվում է նրանով, որ Քրեական օրենսգրքում կատարված մի շարք փոփոխությունների և լրացումների արդյունքում համապատասխան հոդվածների	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			սանկցիաները փոփոխվել են՝ մի դեպքում նախատեսելով առավելագույնը 4 տարի ժամկետով ազատազրկում, մի դեպքում փոխելով նշանակվող պատժի ստորին շեմը, մեկ այլ դեպքում լրացնելով նոր հանցակազմեր: Միաժամանակ, Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորման տրամաբանությունը պահպանելու նպատակով առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում և 5-րդ մասի 2-րդ կետում հինգ տարի ժամկետով ազատազրկումը փոխարինել վեց տարի ժամկետով ազատազրկմամբ:		
3	**ՀՀ Կառավարություն**	Նախագծի հոդված 2, մաս 7, 8	Առաջարկվում է համաներում հայտարարելու արդյունքում անձի նկատմամբ նշանակված պատժաչափի ոչ թե չկրած մասը կրճատել օրինակ կիսով չափ, այլ նշանակված պատժաչափը:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			Առաջարկը հիմնավորվում է նրանով, որ պատժաչափի չկրած մասի կրճատման դեպքում անհավասար պայմաններում են հայտնվում այն դատապարտյալները, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը: Դիցուք, անձը դատապարտվել է 4 տարի ժամկետով ազատազրկման, որին հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու 2 տարին, ստացվում է, որ պատժաչափի չկրած մասը՝ 2 տարին, կրճատվում է կիսով չափ և անձին մնում է կրելու 1 տարի: Իսկ այն դատապարտյալը, որը դատապարտվել է 4 տարի ժամկետով ազատազրկման և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանքը չի ընտրվել, նրա պատժի չկրած մասը՝ 4 տարին, կրճատվում է կիսով չափ և անձին մնում է կրելու 2 տարի:		

4	**ՀՀ Կառավարություն**	Նախագծի հոդված 2, մաս 8, 10	Առաջարկվում է՝ 1) ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտված անձանց նկատմամբ կիրառել նշանակված պատժաչափը 6 ամսով կրճատելու կանոնը, իսկ 2-րդ և 3-րդ մասերով դատապարտված անձանց նկատմամբ համաներում չկիրառել: 2) ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի բոլոր մասերի նկատմամբ կիրառել համաներման ընդհանուր կանոնը՝ չսահմանելով որևէ առանձնահատկություն: 3) ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի միայն 1-ին մասով դատապարտված անձանց նկատմամբ կիրառել նշանակված պատժաչափը 6 ամսով կրճատելու կանոնը, իսկ 2-րդ մասով դատապարտված անձանց նկատմամբ համաներում չկիրառել: 4) Պատժաչափը 6 ամսով կրճատելու կանոնը կիրառել	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվել է:

			նաև ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հանցագործությունների նկատմամբ: 5) ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածով դատապարտված անձանց նկատմամբ համաներում չկիրառել:		
5	**ՀՀ Կառավարություն**	Նախագծի հոդված 2, մաս 10	Առաջարկվում է փոփոխել Նախագծում առկա որոշ հղումներ: Մասնավորապես՝ Նախագծի 2-րդ հոդվածի 10-րդ մասում համաներում չկիրառելու պայմաններից բացառություն նախատեսել նաև նշված հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 5-րդ և 9-րդ մասերով նախատեսված դեպքերի համար: Այս փոփոխության արդյունքում օրինակ՝ տուգանքի դատապարտված անձն առանց վերապահման կազատվի պատժի կրումից կամ սոցիալական խմբում ներառված	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:	Ընդունվել է:

			անձանց նկատմամբ առանց վերապահման կկիրառվի համաներում կամ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված անձի նկատմամբ իրականացվող վերահսկողությունը կդադարեցվի: Առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածի 12-րդ մասում 1-5-րդ մասերին կատարած հղումը փոխարինել 3-5-րդ մասերին հղմամբ:		
6	**ՀՀ Կառավարություն**	Նախագծի հոդված 2, մաս 11	Առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված դեպքերում ոչ թե դադարեցնել քրեական հետապնդումը կամ կարճել քրեական գործի վարույթը, այլև ազատել պատժից՝ նախատեսված դեպքերում գործի վարույթը շարունակելով սովորական կարգով: Միաժամանակ, առաջարկվում է համապատասխան փոփոխություններ կատարել	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:		
7	**ՀՀ Կառավարություն**	Նախագծի հոդված 4	Առաջարկվում է անցումային դրույթներով կարգավորել նաև քրեական գործի հարուցումը մերժելու, հարուցված քրեական գործը կարճելու, ինչպես նաև քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում հանցագործությունների համակցության կանոնի կիրառությունը:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվել է:
8	**ՀՀ Կառավարություն**	Նախագծի հոդված 4	Առաջարկվում է անցումային դրույթներով նախատեսել, որ զինվորական ծառայության մեջ սահմանափակումը պատժի նկատմամբ համաներման կիրառումն ապահովում է ՀՀ պաշտպանության նախարարությունը, իսկ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ իրականացվող	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:	Ընդունվել է:

			վերահսկողության դադարեցումը՝ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունը:		
9	**ՀՀ Կառավարություն**	Նախագիծ	Առաջարկվում է Նախագծում տեղ գտած որոշ ձևակերպումներ համահունչ դարձնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
10	**Պատգամավոր Ռուստամ Մախմուդյան**	Նախագծի հոդված 2, մաս 10, կետ 3	Առաջարկվում է անցումային դրույթներով նախատեսված՝ հետախուզման մեջ գտնվող անձանց նկատմամբ կիրառվող խրախուսական նորմում սահմանված ժամկետը՝ 2019 թվականի հունվարի 1-ը, փոխարինել 2019 թվականի փետրվարի 1-ով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
11	**Պատգամավոր Արփինե Հովհաննիսյան**	Նախագծի հոդված 2, մաս 10, կետ 8	Առաջարկվում է նշված կետում հստակեցնել, որ մի քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում (նշված կետը վերահամարակալվել է որպես 7-րդ կետ) կատարվել է	Ընդունվել է:

			մեկի համար սույն օրենքով համաներում կիրառելն արգելվում է:	համապատասխան փոփոխություն:	
12	**Պատգամավոր Էդմոն Մարուքյան**	Նախագծի հոդված 2, մաս 4, հոդված 2, մաս 5, կետ 3	Առաջարկվում է Կառավարության առաջարկությանը համահունչ՝ փոփոխություն կատարել նաև անզգուշությամբ կատարված հանցագործությունների նկատմամբ համաներման կիրառման կանոնում՝ համաներում տարածելով ոչ թե 5 տարի, այլ առավելագույնը 6 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է: